ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13-ը սեպտեմբերի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, Հ. Մելիքյան(ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և Պ բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի ՊԾ պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի և Ա/Ձ Գալինա Ջահինյանի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին <ԴԱՆՆԻԿ> ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ <ԴԱՆՆԻԿ> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և <ԴԱՆՆԻԿ> ՍՊԸ-ին 13.09.2019թ. ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված փաստաթղթերը: 17.09.2019թ. նիստը շարունակվել է և գնահատող հանձնաժողովը ներկայացրած շտկված փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնային առաջարկի 1 տոկոսը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 17.09.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Վյաչեսլավ Ամիրջանյանի, Ա/Ձ Գալինա Ջահինյանի և <ԴԱՆՆԻԿ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/13» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Ա. Կարապետյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան